



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԶ

Առարկան՝ ԴԱՍՎԱՐ

Հետազոտող ուսուցիչ՝ ԱՐՄԻՆԵ ԱՂԱՍՅԱՆ

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 10
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Երևան 2022

Ներածություն

‘Կրթությունն ամենահզոր գեներ է,որի օգնությամբ հնարավոր է փոխել աշխարհը:’

Նելսոն Մանդելա

21-րդ դարը փոփոխությունների,վերելքների,նորամուծությունների դարաշրջան է: Այդ փոփոխությունները չէին կարող շրջանցել կրթական համակարգը,քանի որ հենց կրթությունն է մոլորակի շարժիչ ուժն ու խթանը: Այս տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխություններն անմիջականորեն կապված են տեղեկատվության և հաղորդակցության ժամանակակից միջոցների ներդրման,զարգացման և տարածման հետ:

Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նպատակային ներդրումն ու կիրառումը առավել բարդ է տարրական դասարաններում,քանի որ սովորողների հոգեբանական զարգացման տեսանկյունից տարրական դպրոցի սովորողներն առավել խոցելի են: Սակայն այսօր կրթության բնագավառում առաջընթացն անհնարին է առանց նորագույն տեխնոլոգիաների առկայության: Դրանց տիրապետումը և օգտագործումը նույնքան կարևոր է, որքան գրելու, կարդալու ունակությունները:

Ակադեմիկոս Ա.Պ.Սեմյոնովի այն միտքը,թե ‘ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում’ առանցքային դեր է կատարում յուրաքանչյուր ուսուցչի գործունեության մեջ: Հաշվի առնելով տարրական դպրոցի սովորողների տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները՝ նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները դարձել են ժամանակակից դասի անբաժան մասը: Դրանք մեծապես նպաստում են տեսողական-պատկերավոր մտածողության զարգացմանը՝ առավել մատչելի,հետաքրքիր,հաճելի դարձնելով ուսումնառությունը:

SՐՏ կիրառումը հետապնդում է մի քանի նպատակներ.

- Բարձրացնել սովորելու շարժառիթը
- Մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը
- Նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը

- Չարգացնել դասի կազմակերպման և անցացման արդյունավետ մոտեցումներ
- Պլանավորել և համակարգել դասվարի աշխատանքները
- Օգտագործել դրանք որպես ինքնակրթության և զարգացման միջոց

Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը կարևոր և առանցքային նշանակություն ունի տարրական դպրոցի ուսուցման և դաստիարակության,ինչպես նաև կրտսեր դպրոցականի հոգեբանական կերտվածքի ձևավորման մեջ: Սակայն պետք է հիշել,որ դրանց օգտագործումը չպետք է վնասի սովորողի առողջությանը ,հոգեբանական կերտվածքին,ֆիզիկական աճին: Մշտապես պետք է հիշել, որ նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները ոչ թե ուսումնական, դաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական, այլ լրացուցիչ և օժանդակ միջոցներ են :

Ուսումնական գործընթացի կազմակերպումը տարրական դպրոցում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման , ուսումնական նյութի մատչելի յուրացման համար և նպաստի նրանց հոգևոր զարգացմանը:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Աշխարհում տեղի ունեցող ամենօրյա փոփոխությունները ժամանակակից մարդուն պարտադրում են մշտապես հարստացնել գիտելիքները, զարգացնել կարողություններն ու հմտությունները՝ խթանելով կրթության շարունակականությունը: Դրան է միտված նաև այսօր ՀՀ կրթական համակարգը, որտեղ այդ փոփոխություններն ակնհայտ են և անվիճելի: Առանց նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման կրթության համակարգը առաջընթաց չի կարող ապահովել արդի աշխարհում: Ուստի նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը կրթության մեջ, սկսած տարրական դասարաններից, թույլ է տալիս ապահովել.

- ուսումնական նյութի մեծ ծավալի ուսումնասիրություն
- տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներով և միջոցներով աշխատանքային հմտությունների մշակում
- սովորողների արժեհամակարգի ձևավորում

Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում օգնում է սովորողներին կողմնորոշվել շրջապատող աշխարհի տեղեկատվական հորձանուտում, տիրապետել տեղեկատվական դաշտում աշխատելու գործնական միջոցներին, զարգացնել իրենց հմտություններն ու կարողությունները:

ՏՀՏ կիրառումը՝

- ակտիվացնում է սովորողների ճանաչողական գործունեությունը
- թույլ է տալիս դասը վարել բարձր գեղագիտական և հուզական մակարդակով /նկատի ունեմ անիմացիան և երաժշտական կիրառումը/
- ապահովում է դիտողականությունը

- ներառում է մեծ քանակությամբ զննական նյութ / գրեթե փոխարինում է մինչ այսօր կիրառվող դիդակտիկ պարագաներին/
- ապահովում է տարբերակված ուսուցման բարձր մակարդակ,անհատական մոտեցում

Գաղտիք չէ,որ սովորողների մտածելակերպը,լեզվատրամաբանությունը,սովորելու և հաղորդակցվելու կարողությունները ձևավորվում են տարրական դպրոցում: Ժամանակի հետ քայլող դասվարը գիտակցում է , որ ավանդական ուսուցման մեթոդների հետ զուգակցելով նորագույն տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները, ձևավորում է ճկուն մտածողություն,կողմնորոշվելու կարողություն ունեցող սովորող:

Համավարակով պայմանավորված,երբ ամբողջ աշխարհը ստիպված անցավ հեռավար կրթության,նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներն իրականացրին սովորողների կրթության իրավունքը՝ ապահովելով դրա շարունակականությունը:

Սկսած առաջին դասարանից՝ նոր նյութի հաղորդման ժամանակ կարելի է օգտագործել համակարգչային խաղեր ,ցուցադրել անիմացիոն պատկերներ: Օրինակ՝ վերարտադրվում է տվյալ պատկերի անվանումը՝ շեշտը դնելով առաջին տառի վրա: Կամ, անիմացիոն նկարների ցուցադրում, որտեղ բաց են թողնվել որոշակի /բաղաձայն կամ ձայնավոր/ տառեր, և աշակերտները տեղադրելու են բաց թողնված տառերը:

Երեխաների տեսողական հիշողությունը զարգացնելու ուղղությամբ նորագույն տեխնոլոգիաները օգտագործում են ուսումնական նյութը ավելի մատչելի դարձնելու նպատակով:

Դասի ընթացքում նորագույն տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ աշակերտը պասիվ իրավիճակից հայտնվում է ուսումնական գործունեության կենտրոնում: Ուսուցիչը մեծապես ուղղորդում,խթանում է սովորողի ինքնուրույն աշխատելու հնարավորությունները և մղում ակտիվացման :

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում համոզվել եմ,որ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները մեծապես փոխում են դասի որակական ցուցանիշները: Այսօր մեծ հնարավորություններ են ընձեռնում նաև համացանցում տեղ գտած արդեն ստեղծված ուսումնական բազմաբնույթ նյութերը, որոնք հասանելի են ցանկացած ուսուցչի / օրինակ՝ „Պաշարների շտեմարան,, , ,,Զան ակադեմիա,,/:

Համակարգիչն առկա է դասի բոլոր փուլերում և ցանկացած առարկայի դասաժամին կատարում է իր գործառույթները: Դասին նախապատրաստվելիս օգնության են հասնում շնորհանդեսները, տրամաբանական խաղերը, թեստերը, ակադեմիական կյանքերը: Բազմաթիվ դասեր անցնում են համակարգչային սենյակում, որտեղ ուսուցանվող կյանքին զուգահեռ, սովորողները դիտում են հատվածներ մուլտֆիլմերից /օրինակ՝ 1-ին դասարանում Գ/Ու դասերը մշտապես անցնում են հեքիաթ-մուլտֆիլմ- քննարկում շղթայով: Յուրաքանչյուր եմ հեքիաթներից հետաքրքիր աշխուժացնող դրվագներ, ապա գուշակում ենք օրվա ուսուցանվող հեքիաթը: „Անբան Հուռին“, հեքիաթի ընթերցում, քննարկում, վերլուծությունից հետո դիտում են մուլտֆիլմը, համեմատություններ անցկացնում/վավերագրական ֆիլմերից /օրինակ՝, Մատենադարան „/4-րդ դասարան/ թեման ամրապնդվում է համապատասխան տեսանյութի դիտմամբ, ապա վերլուծությամբ: Սովորողները սիրում են նաև ինքնուրույն ստեղծել փոքրիկ տեսանյութեր տեսարժան վայրերի, հետաքրքիր բացահայտումների, կենդանիների, թռչունների մասին և ներկայացնել ընկերներին:

Օրինակ՝ Quizizz.com , socrative կայքերով աշխատել ենք սովորողների հետ: Արդյունքները եղել են գոհացուցիչ, սովորողները ոգևորված փորձել են ստեղծել նմանատիպ թեստեր:

Գիտելիքների ստուգման դասերի ժամանակ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները կատարեցին իրենց ուրույն դերը:

Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անցկացվող դասերը ոչ միայն մեծացնում և ամրապնդում են աշակերտների գիտելիքները, այլև բարձրացնում են աշակերտների ստեղծագործական ունակությունները:

Մեր օրերում անչափ դժվար է դաստիարակության գործը: Շուկայական հարաբերությունները փոխել են ոչ միայն ընտանիքի, այլև դպրոցի և դասի բարոյահոգեբանական մթնոլորտը: Ոչ բոլորին է հաջողվում սովորողի համար ստեղծել առողջ հոգեբանական միջավայր, որը կօգնի անձի ձևավորմանը, հետագայում՝ անհատականությանը: Միջավայրը թելադրում է նաև կողմնորոշել երեխաներին տեղեկատվական համակարգերի տարբեր ձևերից օգտվելիս: Այսինքն երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման համար ստեղծել արտաքին բարենպաստ պայմաններ: Տարրական դասարանների ուսուցիչը հստակ գիտակցում է, որ երեխայի միջավայրի /դպրոց , ընտանիք, շրջապատ/ մակարդակից է կախված մանկավարժական ազդեցության արդյունավետությունը:

Իմ կարծիքով դպրոցն ու ընտանիքը համատեղ ջանքերով , պահանջներով պետք է վերահսկեն և ուղղորդեն երեխաների վերաբերմունքը ինֆորմացիոն համակարգերի , ծրագրերի նկատմամբ՝ դրանք ծառայեցնելով նրանց

ուսուցմանն ու դաստիարակությանը: Սովորողի ուսումնական գործունեության հաջողությունը պայմանավորված է նրա հիշելու, հասկանալու, իրացնելու կարողություններով: Առաջադիմության անկումը երբեմն սկսվում է սովորողի տեղեկատվական ընկալման անբավարար մակարդակից: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառությունը կարող է ուսումնադաստիարակչական բազմաթիվ խնդիրների համար լուծումներ առաջարկել: Կարևորն այն է, որ ուսուցչին հաջողվի սովորողներին սովորեցնել ճիշտ օգտվել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներից: Դասվարի աշխատանքում դա այնքան էլ հեշտ չէ: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը պահանջում է նախապատրաստական լուրջ աշխատանք: Միշտ չէ, որ հարմար և գոհացնող նյութեր կարելի է գտնել մեդիա-աշխարհում ցանկացած թեմա ուսուցանելու ժամանակ: Հաճախ դժվար է լինում կողմնորոշվել, թե առավելապես որ դասին է անհրաժեշտ կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորությունները: Այստեղ խոչընդոտ կարող են լինել նաև ուսուցչի համակարգչային գիտելիքների սակավությունը, սարքերի թերությունները, ցուցադրության աղճատումը և այլն:

Տարրական դասարաններում դասի անբաժան մասն են կազմում ուսուցողական խաղերը: Դրանք ունեն հոգեբանական մեծ նշանակություն ,զարգացնում են սովորողների տրամաբանական մտածողությունը,շարժումների համակցումը,հմտությունը: Ծանոթ լինելով տվյալ դասարանի յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկություններին՝ անհրաժեշտ է ընտրել այնպիսի համակարգչային խաղեր,որոնք չեն ծանրաբեռնի նրանց և կխթանեն ուսման որակին: Խաղի տևողությունը և բովանդակությունը պետք է համապատասխանի երեխայի տարիքային առանձնահատկություններին և նախասիրություններին: Յուրաքանչյուր խաղ ունի իր տեմպը և տևողությունը,որոնք պետք է հավասարակշիռ և ներդաշնակ լինեն:

Համակարգչային խաղերի կարևորությունն այն է, որ դրանց հիմքում ընկած է իրական գործընթացի մաթեմատիկական մոդելը: Սրանով է պայմանավորված, որ թվաբանական ուսուցողական առանձին թեմաներ ուսուցանում են համակարգչային խաղերի օգնությամբ: Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Սակայն հատուկ ուսուցման ուղղվածություն ունեն դիդակտիկ խաղերը, որոնք կատարում են երկու կարևոր գործառույթ.

- Խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը
- Նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և կատարելագործմանը

Խաղի յուրաքանչյուր տեսակ զարգացման հրաշալի միջոց է և անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել խաղի ուսումնական և դաստիարակչական նպատակները:Նորագույն տեղեկատվական

հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը դպրոց նաև խաղի միջոցով ուսումնական աշխատանքը մղեց առաջ: Խաղը նաև օգնում է հաճելին համատեղել օգտակարի հետ և հանդիսանում է ուսումնական, կրթական, դաստիարակչական, հոգեբանական խնդիրներ լուծելու հրաշալի միջոց: Համացանցում տեղ գտած էլեկտրոնային խաղ- էջերը գունավոր են և գրավիչ: Դրանց միջոցով երեխան սովորում է այն ամենը, ինչ պետք է սովորեր նախաթվային և նախայթբենական ,այնպես էլ՝ այթբենական և թվային շրջաններում:

Ինչպես գիտենք կրտսեր դպրոցականի մոտ ավելի զարգացած է կամային ուշադրությունը, որը հատկապես կենտրոնանում է, երբ նյութը հետաքրքիր է, երբ այն տարբերվում է պարզությամբ, պայծառությամբ ,երբ սովորողի մոտ այն դրական հույզեր է առաջացնում: Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կարելի է և պետք է կիրառել դասի կազմակերպման տարբեր փուլերում, որոնք են.

- սովորողների նախապատրաստումը նոր նյութի յուրացմանը
- ուսուցանող նոր նյութի յուրացում
- նոր նյութի ամրապնդում
- դասի ամփոփում
- տնային առաջադրանք
Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումն օգնում է լուծելու հետևյալ դիդակտիկ խնդիրները.
- յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- համակարգել ձեռք բերած գիտելիքները
- ձևավորել ինքնակառավարման հմտություններ
- ձևավորել սովորելու շարժառիթ
- ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել սովորողներին նյութի յուրացման **ժամանակ**

Հայտնի է , որ երեխաները հիմնականում մտապահում են լսածի 8% և տեսածի 20%: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 45-50%-ը:

Կրտսեր դպրոցում մեդիա տեխնոլոգիաների օգտագործումը դասի ընթացքում սկզբունքորեն չի փոխում դասի կառուցվածքը, փոխվում է միայն դրանց ժամանակավոր բնութագիրը:

Մեդիաների կայացման կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակարգված , վերլուծական մտածողությունը: Մուլտիմեդիա շնորհանդեսն ավելի օպտիմալ և արդյունավետ է համապատասխանում դիդակտիկ նպատակներին:

1. Կրթական առումով՝ սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալումը և ուսումնական ուսումնասիրության օբյեկտների կապերի, հարաբերությունների ըմբռնումը

2. Չարգացման առումով՝ սովորողների ճանաչողական հետաքրքրվածությունների զարգացումը ընդհանրացնելու, վերլուծելու, համեմատելու հմտությունները, սովորողների ստեղծագործական գործունեության ինտենսիվացումը

Դաստիարակչական առումով՝ ինքնուրույն և խմբային աշխատանքների հստակ կազմակերպման հմտություններ, ընկերության, փոխադարձ ճգնության զգացումների դաստիարակում

Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել թեմայի հիմնական կետերի նշման, ինչպես նաև ուսուցչի բանավոր խոսքի և բացատրությունների ուղեկից: Ուսուցման ընթացքում ժամանակակից դպրոցում հատուկ ուշադրություն է դարձվում կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունը զարգացնելու, ինքնագործունեությունը խթանելու աշխատանքների ուղղությամբ: Ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման պրոցեսի կազմակերպիչ, սովորողների ինքնուրույն գործունեության ղեկավար, որպես անհրաժեշտ օգնություն և աջակցություն ցուցաբերող օղակ:

Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հնարավոր չէ համեմատել կավիճով և գրատախտակով բավարարվող ուսուցչի նյութի, պատկերի հետ: Նորագույն տեղեկատվական և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտին մատուցվող գրաֆիկան, պատկերը, դիագրաման կամ սխեման ավելի կոկիկ, մաքուր, պայծառ, հստակ է ու նաև գունավոր: Պրոյեկտորի օգտագործման դեպքում սովորողի աշխատանքային տարածքը պահանջում է բավարար լուսավորություն, տեսանելիության բարձր մակարդակ: Սա ևս կարող է իր դրական կամ բացասական ազդեցությունը թողնել սովորողի հոգեբանական զարգացման վրա:

Ստեղծագործող և նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ օգտագործող դասվարը ստիպված է մեծ ուշադրություն հատկացնել ուսումնական նյութի մատուցման տրամաբանության վրա, որն իր հերթին դրական է անդրադառնում սովորողների գիտելիքների մակարդակի վրա: Կամաց- կամաց փոխվում է նաև երեխայի գիտակցական վերաբերմունքը համակարգչի նկատմամբ: Ուսուցչի անմիջական ուղղորդման, ուսուցիչ-ծնող հարաբերության շնորհիվ, համակարգված աշխատանքի արդյունքում կրտսեր դպրոցականը գիտակցում և ձևավորում է իր վերաբերմունքը նորագույն տեղեկատվական և հաղորդակցական

տեխնոլոգիական միջոցների հանդեպ, որպես տեղեկատվության ձեռք բերելու , դրանք նպատակային կիրառելու անհրաժեշտ գործիքներ: Կրտսեր դպրոցականը հասկանում է, որ համակարգչային միջոցները միայն խաղալու համար չեն, որ դրանք ,անբաժան և լուրջ գործիքներ են մարդկային գործունեության ցանկացած բնագավառի համար:

Նորագույն տեղեկատվական և հաղորդակցական միջոցները ակնհայտորեն ազատում են նաև ուսուցչին ձանձրալի, միապաղաղ գործողություններ կատարելուց, իրական հնարավորություններ են ստեղծում կենտրոնանալու ստեղծագործական, դաստիարակչական բազմաբնույթ աշխատանքների վրա: Համակարգչի ներդրումը շատ կարևոր է սովորողների գրելու հմտություններ զարգացման մասով, որովհետև համակարգչով գրելու դեպքում երեխան ավելի ինքնավստահ է : Դիշտ է նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթության բնագավառում հեղափոխություն է արել ուսումնադաստիարակչական աշխատանքներում, բայց դրանով ոչ կառավարելի կիրառությունը հղի է բազում բացասական ազդեցություններով: Ինչպես նշում է հոգեբան Կ. Նալչաջյանը՝ Այսօր բացի սուրճի, ծխախոտի և թմրադրոգերի կախվածությունից, մեր կյանք է մտել նաև կախվածությունը համակարգչից՝ Այստեղից էլ երեխաներին այս հարցում ճիշտ ուղու վրա դնելու համար պարտադիր է ուսուցիչ- ծնող կապը, համատեղ աշխատանքն ու միասնական պահանջները ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելու համար :

Մասնագետների դիտարկմամբ, հատկապես պատանիների շրջանում համացանցի ոչ ճիշտ օգտագործումը կարող է կախվածություն առաջացնել՝ հանգեցնելով հոգեբանական տարբեր շեղումների: Բացի հոգեբանական ներգործությունից համակարգչի չարաշահումը բացասաբար է անդրադառնում նաև առողջության տեսանկյունից՝ առաջ բերելով տեսողության վատթարացման մի շարք խնդիրներ, օրինակ՝ կարճատեսություն, աչքաթարթություն, աչքերի գերհոգնածություն : Յուրաքանչյուրիս դասարանում էլ կան երեխաներ , որոնք իրենց ազատ ժամանակի մեծ մասը անցկացնում են համակարգչի և հեռուստացույցի առջև: Կտրվելով բակային խաղերից և իրական շփումից՝ երեխաների մոտ աստիճանաբար առաջանում է նաև կոլեկտիվից կտրվելու, մեկուսանալու հոգեբանական բարդույթներ: Նախընտրելի է կրտսեր դպրոցականի համար համակարգչից օրվա մեջ օգտվել մեկ ժամ: Հակավոր է նկատի ունենալ նաև նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ճառագայթային ազդեցության հետևանքները:

Անչափ կարևոր է նաև համակարգչի դիրքը և տեղադրվածությունը տանը և դպրոցում, սենյակի լուսավորվածությունը, նստելու տեղը և դիրքը , քանզի

երեխայի նստելու դիրքից կարող է առաջանալ ողնաշարային շեղվածքներ , կոնկրետ՝ ողնաշարի ծռում:

Այն դեպքու, երբ աշակերտը օրվա մեծ մասը անցկացնում է ամարտֆոնի, պլանշետի, հեռուստացույցի առջև, ապա համոզված եմ , կարող է առաջ գալ հոգեկան , ախտաբանական երևույթներ:

Մեր ` դասվարներիս կողմից նկատելի է գլխացավերի հաճախականացումը կրտսեր դպրոցահասակ երեխաների մոտ , որն ակնհայտորեն հետևանք է չափից ավելի երկար համակարգչի կամ հեռուստացույցի առջև լինելու: Նկատելի է նաև մեր օրերում մի մասը շարժունակ չեն , որը ևս հետևանք է համակարգչի և հեռուստացույցի առջև երկար նստելու, այն անտեղի օգտագործելու:

Սրանից խուսափելու լավագույն միջոցը ուսուցիչ- ծնող սերտ կապն է և սովորողներին ներկայացվող միասնական պահանջները: Վերը նշվածներից խուսափելու համար ես մշտապես համագործակցում եմ ծնողների հետ և օգնում , աջակցում նրանց սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ժամանակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

20 –րդ դարի վերջին և նոր ` 21 – րդ դարի առաջին երկու տասնամյակներին մարդկային միտքը վիթխարի , հեղափոխական թռիչք կատարեց նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործման բնագավառում : Եվ մեր օրերում հիշյալ հայտնագործումները այնպիսի թռիչքային զարգացում են ապրում , որ այսօրվա նորը , վաղը , արդեն հին է :

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները լիովին ներխուժել են կյանքի բոլոր բնագավառներ և , բնականաբար , այս հարցում առաջատար է կրթության ոլորտը : Ժամանակակից դասն անհնար է պատկերացնել առանց նորագույն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների , որոնք գործող ուսուցչի լավագույն օգնականները դարձան և հրաշալի լուծումներ առաջարկեցին հատկապես համավարակի օրերին և կյանքի այլ ոչ ստանդարտ իրավիճակներում : Կրթության հիմնական օղակը հանդիսացող հանրակրթական դպրոցը , կրթությունը համակարգող պետական հաստատությունների ղեկավարությամբ և ուղղորդմամբ , հնարավոր և անհնար բոլոր միջոցներով ջանում է նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները ծառայեցնել ի շահ ժամանակակից սովորողի ուսուցմանն ու դաստիարակությանը :

Այսօր ժամանակի պահանջն ու անհրաժեշտություն է ուսուցման գործընթացը կազմակերպել մեդիագործիչների անմիջական օժանդակությամբ , ինչպես նաև նոր մարդասիրական , մանկավարժական մեթոդների կիրառմամբ :

Իմ կարծիքով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում չպետք է կրի ցուցադրական , թվաքանակային , պարզապես դարի թելադրանքի բնույթ : Այսօրվա ուսուցիչը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության նպատակահարմարությունը որոշում է ուսուցանվող նյութի ընկալման , երեխաների կողմից գիտելիքների յուրացման և դաստիարակչական խնդիրների լուծմանը օժանդակելու , ուսումնառությունը խթանելու , հետաքրքրությունների շրջանակը մեծացնելու , գեղագիտական ճաշակ ձևավորելու համար : Սրանք գալիս են գործնական դարձնելու գիտելիքները , ծառայելու սովորողի անձնական որակների զարգացմանը , նրա մտավոր աճին , նպաստելու ձեռք բերած տեղեկատվությունը իմաստավորված յուրացնելուն : Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները խթանում են տարրական դասարանի սովորողների քննադատական մտածողության ,

երևակայության , կամային որակների զարգացումը , որոնք նրան անհրաժեշտ են ողջ կյանքի ընթացքում : Ժամանակակից տարրական դպրոցի ուսուցիչն իր առջև դրված բազմաթիվ խնդիրների մեջ կարևորագույն տեղ է հատկացնում սովորողին , որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ակտիվ մասնակից լինելու անհերքելի փաստին , և ցանկացած նորագույն տեխնոլոգիայի կիրառում ծառայեցնում է այդ ակտիվությունը աճեցնելու , նպատակաուղղված դարձնելու համար :

Անշուշտ , գիտելիքների ձեռքբերումն ու կարողությունների զարգացումն ուսուցման կարևորագույն արդյունքն է , բայց այն չպետք է ստանալ սովորողի առողջության գնով : Երեխայի հոգեբանական , հուզաբարոյական կերտվածքի ձևավորումը պահանջում է ամենօրյա , քրտնաջան , համառ , նպատակաուղղված աշխատանք , այն էլ ոչ սովորական :

Այստեղ անմիջականորեն կարևորագույն խնդիր է լուծում դպրոց – ընտանիք – սովորող եռանկյունին , որի հավասարակողմ լինելու հանգամանքից է կախված սովորողի հոգեբանական զարգացման առողջությունը : Խելամիտ կապը ` հանուն ընդհանուր շահի և նպատակի , հանուն մեր երկրի և հայրենիքի վաղվա օրվա :

Իմ կարծիքով , մեր իրականության մեջ դպրոցը և ուսուցիչը իրենց խնդիրները կկարողանան լուծել , երբ .

- Սիրում են իրենց աշխատանքը
- Սիստեմատիկ զբաղվում են իրենց առարկայական գիտելիքների և կարողությունների զարգացմամբ , այսինքն ` ինքնակրթությամբ
- Սիրում են երեխաներին և հեռու են անհարկի խտրականությունից , ունեն շռայլ հոգի
- Կարողանում են նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ծառայեցնել սովորողների անձնային որակների ձևավորմանը և գիտելիքների , կարողությունների զարգացմանը
- Կարևորում են դպրոցի և ընտանիքի միասնական պահանջները , ընդհանուր նպատակների իրականացումը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրովսկի 'Ընդհանուր հոգեբանություն', Երևան, 1974
2. Նալչաջյան, 'Ընդհանուր հոգեբանության հիմունքներ', 1998
3. 'Նախաշավիղ' գիտամեթոդական հանդես, 6, 2011
4. 'Նախաշավիղ' գիտամեթոդական հանդես, 5, 2013
5. Петку ,, Компьютерный мир дошкольника ,, - М. : Новая школа, 1997
6. Симонович С., Евсеев Г., ,,Занимательный компьютер ,, - М. : АСТ-Пресс, 2004
7. [http.\\www.armedu.am](http://www.armedu.am)
8. [http.\\www.int.am](http://www.int.am)
9. [http.\\www.hetq.am](http://www.hetq.am)
10. [http.\\www.rusedu.ru](http://www.rusedu.ru)